

# ՍԻՈՆ

ԲԱՅԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Բայոր երկիրներու համար Սիոնի Տարեկան բաժնեղինն է  
Անգլ. Շլեֆ 6 (Ամեր. Դաշտ 1.50) կամ անոր համարժէքը  
Խռամսեալ կամ վեցամսեալ բաժանուրդագրութիւն չկայ:  
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԵԼԻ է

Հասցէ՛ Rédaction de la Revue Arménienne ՏՅՈՆ  
Պատրիարքական  
ՅԵՐՈՍԱԼԵΜ — Palestine

## Ն Ա Մ Ա Կ - Շ Բ Զ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

ԿԵՍԱՐԱՑԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Սիրելի ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ՝

Կեսարիոյ եւ Շրջ. Հայրենակցական Միութեան Գահիրէի Վարչութիւնս ՊԱՏՄՈՒ-  
ԹԻՒՆ ՀԱՅ ԿԵՍԱՐԻՑ զրքին պատրաստութիւնը յանձնած ըլլալով յայտնի բանասէլք  
Պ. Արշակ Ալպօյանեանի, մինչեւ 1933 Մայիս ձեռագիրը պատրաստ կ'ըլլայ տպարան  
յանձնելու համար:

Այս առիթով ջերմագին կոչ կ'ընենք մեր հայրենակիցներուն որպէս զի Վարչու-  
թեանս տրամադրեն Յիշատակարաններու արձանագրութեանց պատճէններ, Եկեղեցինե-  
րու, Վանքերու, դպրոցներու, յուշարձաններու, տեսարաններու, նշանաւոր կեսարացի  
գէմքերու, տարագներ եւ բարքեր խորհրդանշով պատճերներ, պատմական հաւաքոյթ-  
ներու, եւ զանազան միութեանց խմբանկարներ իրենց յարտկից եւ անհրաժեշտ ձանօ-  
թութիւններով:

Վարչութիւնս խնամքը պիտի ունենայ, իրեն զրկուած լուսանկարներու լիշէն  
պատրաստել տալէ վերջ, խսկականը իր տիրոջը վերադարձնելու:

Մեր այս ձեռնարկը անխափի բոլո՞ր կեսարացի հայրենակիցներու որտին խօսող  
պատմական մեծարժէք յիշատակարան մը ըլլալով վատահ ենք թէ մեր հայրենակիցները  
պիտի փութան սատարել ճոխ եւ բազմաբովանդակ ըլլալուն զրքի մը, որ բովանդակ  
կեսարիոյ գաւառի հայութեան զարաւոր կեանքը իր մէջ խտացնող աւելի քան 700 էջ-  
նոց պատկերագրադ գեղատիպ ստուար հատոր մը պիտի ըլլայ:

Հայրենակցական Սիրալիր Բարեներով

Գահիրէ, 7/1/1933

Առենադպիր

Առենապիս

(Կնիք)

ՄԱՆՈՒԷԼ ՊԵՏՐԵՍԱՆ ԲԻՒԶԱՆԴ ԹԵԹՔԵԱՆ

Հասցէ .—

UNION DES COMPATRIOTES DE CÉSARIE ET DES ENVIRONS

B. P. №. 310, Le CAIRE (Egypte)

— առաջինը —

Գահիրէի «Արեւշի թղթակիցին», որ Յունվարի մեր գիտողութիւնը ահանելէ վերջ կը ժամփաքի վերսուին անդրադառնաւ Ա. Աթոռոյն նորակերտ Մատենադարանի անուանակոչութեան խընդույն, վերջին անգամ ըլլալով գիտել կուտանք պարզապես թէ հոգելոյս Դուրեան Ս. Պատրիարքի բացարձակ իրաւունքին մէջ էր՝ այդ առթիւ իր ազատ կամքովը անօրինութիւն մը կատարած ատենա:

Մատենադարանը, հակառակ որ իր պարունակութեան ամենէն արժէքաւոր յառը Դուրեանի սեպհականութիւնն էր եղած, Վանքին էր եւ վանքին պիտի մնար ընդ միշտ Այս մասին ոչ ոք պիտի կրնար տարբեր խորհիւ Մըրազանինը չէր ոչ չենքը եւ ոչ պարունակութիւնը, առև, բայց Մըրազանինը պիտի ըլլար անոր անունը, քանի որ Յորելինական Յանձնաժողովը որոշած և Տնօրին Ժողովը եւ Միարանութիւն եւ Նուիրատունիր ընդունած էին որ «Դուրեան Մատենադարան» կոչուի անիկա, Մըրազանին Յօրելեանին առիմով Արդ, Հոգելոյս Մըրազանը իրեն ընծայուած պատիւն էր միայն որ կը վերընծայէր բարերար կիւլպէնկեանի, եւ ոչ թէ մատենադարանը, որ ինչպէս եթէ Հուրեան կոչուէր, Խոյնուէ և կիւլպէնկեան կոչուելով, պիտի չզազրէր բնաւ վանքինը ըլլալէ: — Այնչափ պարզ էր ասիկա եւ հասկնալի որ Միարանութիւն եւ Տնօրին Ժողովը եւ Ցորելինական Յանձնաժողով, զմայլանք միայն դդացին այն առեն Մըրազանին առաքինական վերաբերմունքին առջեւ, եւ, առանց առարկութեան, ընդ անեցին զայն:

Յետոյ, գործի մը կամ հասաւութեան մը կոչումը կամ անունը անպատճառ լիուլի ստացութեան կամ ցմիշտ սեպհականութեան առացոյց կամ նշան չեն շարունակ, անոնք յաճախ լոկ ցոյց մըն են պատուագիր յիշատակութեան և կամ ապացոյց՝ սիրալիր զգացման և երախտագիտութեան գահիրէի մէկ փողոցը նուպաւեան կոչուելուն համար ստիգուած չենք մտածելու թէ մեծ անուն քաղաքագէտը ի՞նչ չափով մասնակցած է արդեօք այդ թաղամասին շինութեան, կամ Հայաստանի նորաշէն աւանը նուպաւաշէն անուանուելուն համար արդար պիտի չըլլար խնդիր ընել թէ հանգուցեալ վաշչան արգեօք հոգայած էր անոր շինութեան ամրող ծափքը եւ մտածած էր նաեւ հոն բնակիւ ուղարկերուն ապրուստին ու ապագային մասին Պաղեստինի Հրեաները Պալմաւիէ կոչ չեր են Գալիլիոյ մէկ գիւղը, պարզապէս երախտագիտութեան զգացումով մը: Եւ առարիներ առաջ, իզմիրլեանի առաջին պատրիարքութեան օրով, երբ ներայի նարեկեան վարժարանին տեղը, աղդապատկան գետնի վրայ կառուցուած նոր վարժարանը, իր բարերարին անունով կապյան կոչուած առաջային վարչութիւնը նկատի չառաւ բնաւ արտաւնչը քանի մը անձերու, որոնք գիտել կուտային թէ բարերարը պէտք էր առահովիւ նաեւ նորաշէն զպրոցին եւ եկեղեցին ապագայ հասոյթներն ալ նըրուսազէմի վանքին նոր Մատենադարանը իր կառուցովին, Բարերար կիւլպէնկեանի անունովը կոչուած է՝ սիրոյ և երախտագիտութեան այդպիսի զգացումով մը միայն, և այդ անոնց կոզմէ, որոնք ի սրտէ և ի պաշտօնէ լիուլի իրաւունքը ունէին այդ կարգի անօրինութեան մը: — Արագիւստ Թօվազակիցը իրաւունք առած էր ինքզինքին՝ Ալլեւունի ուղած իր նամակը վերջացնել ամէն բան չափ մը ունի նոյն ինչ շողոքորմութիւնը կծու վճիռով մը, պիտի ժամփաքէնք վատահացնել զինքը որ թէ՝ այդ անօրինութիւնը կատարուած միջոցին, երեք առարիներ առաջ, և թէ՝ զայն լուսարանելու նուիրուած մեր այս տողերուն մէջ, հրմակ, գործած է միշտ, ոչ թէ այդ գոհիկի զդացումը, այլ արդար յարդանքի և երախտագիտութեան մտածումը միայն Ոչ, շողոքորմութիւն չէ բնաւ եղածը, ինչ որ այժմ կը խանգարէ աղդին բարոյականը, աւելի՝ սահմարձակ ապերախտութիւնն է, որ վախ կայ թէ հետզհետէ պիտի կարէ անցնի ամէն չափ ու սահման, քանի որ ամենէն անակնկալ զիրքերէ և անկիւններէ ու ալաքուած անհարկի քննադատութիւններ և խծրծանքներ ահա այսպէս օրէ օր աւելի կը ձգտին կարծեն իրաւունքներ բարեսէրներն ու բարերարները իրենց քիչ կամ շատ բարեգործական նուիրատուութեանց մէջ:

— շողոքորմութիւնը —

# ՍԻ ՈՆ ՆՈՒԻՐՈՂՆԵՐ 1933-Ի ՀԱՄԱՐ

Հոգ. Տ. Յարութիւն վրդ. Պարտներն՝ Ե-  
րուսաղէմէն, Յովսէփեան Տ. Յարու-  
թիւն քահանային՝ Կալաց. — Պարտն-  
եան Հայրապետին՝ Մաթայ:

Հոգ. Տ. Նորայր վրդ. Պօղարեան՝ Երու-

սաղէմէն, Պաղէլեան Ամբատին՝ Դա-  
մասկոս:

Զատէեան Զարէհ՝ Բրակայէն, Ա. Փրկչայ-  
լազ. Հիւանդանոցին՝ Կ. Պոլիս. —  
Գալֆայեան որբանոցին՝ Կ. Պոլիս:

## ԱՏԱԶՈՒԱԾ ՆՈՐ ՀՔԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՐԵՔԻ: ՀԵՐԱՍԼ: — Տիգրան Զէօկիւրեան: Փարիզ, 1933, էջ 224, գիւ 20 Փրանք: Մատենաշար անահատակ Գրադէտներու Բարեկամներ», թիւ 7:

ԸՆԴ. ՏԱՐԵՑՈՅՑ Ա. Փ. ԱԶԳ. Հեման-  
ԴԱՆՈՑԻ. Կ. Պոլիս, 1933, էջ 218, գիւ  
20 Փրանք:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԱՏԵՆԱԾՈՐ, Վահան Զար-  
պարեան: Թիւ 7. Հայ Վեհափիկ Բ.,  
Թիւ 8-9. Յիշատական Արզու, 1933:  
ՆԱՅ. ԲԻՆՔԻՐԹԸՆԻ ԱՄԿԱԾՆԵՐԸ. Հրա-  
արակութիւն Ե. Տօլպագեան:  
Թիւ 1. Մարյամագան Լուցին Զենիլ. էջ  
32, գիւ 10 ս. գ.։  
Թիւ 2. Դրամանկանցներու որչ մը. էջ 32,  
գիւ 10 ս. գ.։

## ՍԻԾ-Ի ՀԵԾ ՓՈԽԱԿՈՒՈՂ. ԹԵՐԹԵՐ

ԴԻՏԱՐԱՆԻ: Ամսաթերթ: ԵԳ. Տարի: Հաս-  
ցէ, 117 Adams Street, Brooklyn, N. Y.,  
U. S. A.: Բժն. արկ. 1.50 տոլար: Երես  
16:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀՈՅՈՒՀԻ, Ամսագիր: Հիմ-  
նագիր-Տնօրէն՝ Տիկ. Սիրան Սեզա: Ա.  
Տարի: Հասցէ, Mme. Siran Seza, B. P.  
722, Beyrouth, Liban: Բժն. արկ. 50  
Փրանք: Երես 32:

ԵՓՐԱԾ, Ազգային, Քաղաքական և Գրա-  
կան Հայաթերթ: Զ. Տարի: Տէր և Տը-  
նօրէն Ե. Պէնլեան: Հասցէ, B. P. 382,  
Alep, Syrie: Բժն. Տրկ. 3.50 տոլար:  
Երես 4:

ԶԱՐԹՈՆԻ: Օրաթերթ, Ազգային, Գրական  
և Քաղաքական: Ա. Տարի: Հասցէ, B.  
P. 1490, Galata, Istanbul: Բժն. Տրկ. 100  
Փրանք:

ԺԱՄԱՆԱԿԻ, Ժողովրդական Անկախ Օրա-  
թերթ: Ի. Տարի: Հասցէ, B. P. 9,  
Istanbul:

ԼՈՅԱ, Պաշտօնաթերթ Հ. Առաք. Ա. Գր.  
Լուսուրիչ Եկեղեցւոյ: Ա. Տարի: Հաս-  
ցէ, Rev. Bessak Sarkisian, Armenian Apostolic Church, 16th and Oxford Sts. Philadelphia, Pa.: Բժն. Տրկ. 1 տոլար: Երես 4:

ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ, Որդան Հայ-  
կոմկուսի (Բ) Կենտրոնի յեզ ՀՍԽՀ Կենտ-  
րուծկոմի: ԺԲ. Տարի:

ԿԱՋԱԾ, Երգիծական Շաբաթաթերթ: Ի. Գ.  
Տարի: Խմբագիր-Տնօրէն՝ Երուանդ Թօ-  
ւայեան: Հասցէ, 208bis Rue Lafayette,  
Paris (10<sup>e</sup>): Բժն. Տրկ. 100 Գր.: Երես 8:

ԿՈՌԻՆԿ: Շաբաթաթերթ, Աղքային, Քա-  
ղաքական, Հասարակական: Ժ. Տարի:  
Տնօրէն-Խմբագիր՝ Գառնիկ Գէորգեան:  
Հասցէ, 5617 Walnut Street, Philadelphia:  
Բժն. Տրկ. 2 տոլար: Երես 8:

ՀԱՅ ԿԵԴՐՈՆ, Պաշտօնաթերթ Հայց. Առա-  
քելական Եկեղեցւոյ Հոգաբարձութեան  
Պ. Այրէսի: Ա. Տարի: Հասցէ. Calle Acevedo  
1353, Buenos Aires: Բժն. արկ.  
1 տոլար: Երես 16:

ՀԱՅ ԿԻՆ: Կիսամսեայ Հանդէս: Տէր և  
Տնօրէնուհի՝ Հայկանոյը Մառք: Ժ. Գ.  
Տարի: Հասցէ, B. P. 2192. Pera, Istanbul:  
Բժն. արկ. 75 Գրանք:

ՀԱՅ ՄԻՐՏ, Անկախ Շաբաթաթերթ: Է.  
Տարի: Խմբագիր՝ Յակոբ Գույումճեան:  
Հասցէ, 314 S. 60th. Street, Philadelphia,  
Pa.: Բժն. Տրկ. 1.50 տոլար: Երես 4: